# Դաս 41-42. Ով է անհատը: Տնտեսական և քաղաքական գործիչ

Լրացուցիչ նյութ

## Պետությունների առաջացումը

*Մինչ այժմ գիտնականները վիճում են պետությունների առաջացման խնդրի շուրջ: Նրանք չեն կարողանում միանշանակ ասել, թե ինչպես են առաջացել պետությունները: Նրանց մի մասը կարծում է, որ դրանց առաջացման մեջ մեծ դեր են խաղացել նվաճումները. ուժեղներն իրենց են ենթարկել թույլերին և կառավարել նրանց: Մյուս մասը ենթադրում է, որ մարդիկ պայմանավորվել են միավորվել և ստեղծել իշխանության մարմիններ, որոնք օգնում են կարգավորել հարաբերությունները մարդկանց միջև և պատժել նրանց, ովքեր կարգ են խախտում: Գիտնականների երրորդ խումբը կարծում է, որ պետությունների ստեղծումը տնտեսության զարգացման արդյունք է:*